Ինչպէս հաշտեցնել եղեռնի արհաւիրքն ու կորուստը մոռացութեան մատնող յուշին պատճառով անդամակցելի վերջը:

Ահրաժեշտ է սրափիլ ու վայրկեան առաջ տունդարձի ճամբան բռնել:

«ԱԶՍ ՕՐ»

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ՝ ԾՈՒՇԵՆ

ԱՐՈՒԵՍԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՍԻՄՓՈՂԻՈՒՄ

Տարուան երկրորդ կիսուն տեղի ունենալիք եւ մէկ ամիս տեւող Ծուշի բերդաքաղաքի արուեստի տարեկան համահայկական սիմփոզիումին ընթացքին տարբեր ուղղութիւններու քսան ներկայացուցիչներ պիտի պատրաստեն քանդակներ եւ գեղանկարներ, որոնք պիտի գեղեցկացնեն քաղաքը եւ պիտի հարստացնեն թանգարանները:

Սիմփոզիումին նիւթերն են՝ «Ծուշիի 10 գործիչները»՝ քանդակագործներու եւ «Աշունը Ծուշիի մէջ» գեղանկարիչներու համար: Ծուշիի սարահարթի կրթաբարի մօտակայ քարի հանքէն պիտի կտրուի 10 քար, 2,30 մեթր բարձրութեամբ, որոնցմէ մէկ ամսուան աշխատանքին իրեն արդիւնք պիտի ստեղծուին Արցախի նշանաւոր իշխան Մահլ Սմբատեանի (19րդ դար), Գրիշ Տէր Մանուէլի (1428), Աւան գօրավարի (18րդ դար), Պըլլ Պուրի, գօրավար Լազարեի, Բաղդասար Հասան Զալալեան մետրփոլիթի, Պետրոս Ծանչեանի, գրող Մուրացանի, բարերար Թաղէս Թամարեանի եւ Աշոտ Բեկորի քանդակները: Իսկ գեղանկարիչները պիտի ներկայացնեն մէկական աշխատանք՝ «Աշունը Ծուշիի մէջ» նիւթով, ազատ նիւթով ալ պիտի պատրաստուի 30 աշխատանք, որոնք պիտի նուիրուին քաղաքին:

Սիմփոզիումի գլխավոր կազմակերպիչն ու համակարգողն է «Ծուշի» Հիմնադրամը՝ մասնակցութեամբ Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան մշակութի նախարարութեան, Ծուշիի շրջանի վարչակազմին ու քաղաքապետութեան, Հայաստանի Ժողովրդական Արուեստի Թանգարանին, Արցախի պատկերասփիւռի կայանին եւ այլ կազմակերպութիւններու:

ՇՈՒՇԻԻ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԾՐԱԳԻՐԻ ԻՐԱԿԱՆԱՅՈՒՄ

«Ծուշի» Հիմնադրամը կը նախատեսէ այս տարուան ընթացքին իրականացնելու Ծուշիի թանգարանային համալիրի ծրագիրը: Քաղաքը այսօր ալ մէջ պէտք է կրէ ու իրականացնէ մշակութի համահայկական կեդրոնի դերը, որուն արտայայտութիւններէն մէկն է թանգարանային համալիրը:

Վերջինս իր մէջ պիտի ներառէ պատմական - երկրագիտական եւ լուսանկարչութեան ազգային թանգարաններ: Լուսանկարչութեան ազգային թանգարանը պիտի ունենայ գեղարուեստական լուսանկարչութեան ցուցասրահ, պիտի կազմակերպուին շրջանի ցուցահանդէսներ, ինչպէս նաեւ՝ լուսանկարող - լրագրողներու տարեկան մրցումներ:

Ծրագրի ընդհանուր պիւնտին կը կազմէ 300 հազար տոլար: Ծրագրի պիտի գործադրեն նաեւ Ծուշիի պատմութեան թանգարանը, Հայաստանի եւ Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան մշակութի ու Հայաստանի արդիւնաբերութեան եւ առեւտուրի նախարարութիւնները, Սփիւռքի հայկական գաղութները: Ծրագրին մասնակց կ'ունայ գաղտնի որեւէ պետական կամ ոչ պետական կազմակերպութիւն, ինչպէս նաեւ՝ ռեւէ անհատ, որ փափաք եւ կարելիութիւն ունի ստանձնելու ծրագիրին իրականացումը:

ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐԸ ԿԸ ԳՐԵՆ

ԵՐԿԻՐ ԻՄ ԸԱՅՐԵՆԻ

Հայաստանի բարձր լեռներ ու սարեր 2եւ չեն տեսեր կարօտ ունի տեսնելու Մեր երկնի տակ ո՞վ իմ կեանքի ընկեր Կարօտ ունիմ եւ կարօտով դիտելու:

Թող ինձ թովէ իմ Հայրենի քնքուշ հով եւ քուն մտնեմ ծառի մը տակ սիրելիով Երջանկութեան սիրոյ արցունքս հոսի Դէպի Սեւան ընկեր դարձած Արփայի:

Քեզմէ հեռու մնալ չէ՛ ալ ներելի: Փարած քեզ համբուրեմ հողդ տենչալի Պիւսի յայտնեմ իմ հաւատքը լիայոյս Ընտրեալ Ազգին մշակոյթով համակ լոյս:

Հայ դրօշը Հայ Քայլերը եւ բանակ Որքա՛ն օրեր եւ շոյեցի կրծքիս տակ Թող աչերս տեսնեն լեռն հարապատ Ու են երգեն պատուիրինս Այա՛տ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԵՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

● Ժաք - Արմէն Վարդանեանի մահուան առիթով, Ս. Վարդանանց եկեղեցւոյ եղած են հետեւեալ նուիրատուութիւնները.

Տէր եւ տիկին Ժամ Զիւրքեան 20,000 լ.ո., տէր եւ տիկին Արի Թաթեան 20,000 լ.ո., տէր եւ տիկին Տիգրան Գաբրիէլեան 20,000 լ.ո., տէր եւ տիկին Գրիգոր Ըպրեգեան 20,000 լ.ո., տէր եւ տիկին Սանդուղեան 20,000 լ.ո., տէր եւ տիկին Օճիկ Ալաճաճեան 20,000 լ.ո., տէր եւ տիկին Ժամ Տաղեան 20,000 լ.ո., տէր եւ տիկին Ժորժ Զիւրքեան 15,000 լ.ո., տէր եւ տիկին Ժամ Վարդանեան 10,000 լ.ո., տէր եւ տիկին Պօղոս Էքմէքեան 10,000 լ.ո., տէր եւ տիկին Լեւոն Պիլեմեան 10,000 լ.ո., տէր եւ տիկին Յարութիւն Խաչերեան 10,000 լ.ո., քոյր Մարիթ Եահանեան 10,000 լ.ո., տիար Վազգէն Աբրահամ Եահանեան 10,000 լ.ո., օրդ. Սոնա Գոչեան 10 \$:

Ա. Պ.

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԿԵՂՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՍ ՎՐԵՄԱՐՄԵՆ ԱՐԹԻՆԵԱՆԻ ԽՕՍԵՐ ԱՐՏԱՍԱՆՈՒԿԸ՝ 7 ՅՈՒՆԻՍ 2003ԻՆ, ՃԵՄԱՐԱՆԻ ՏԱՐԵՎԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹԻՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԴԵՄԱՐԱՆԸ՝ 21ՐԴ ԴԱՐՈՒՆ

Համազգայինը 75 տարեկան է. երկու տարի էն պիտի նշուի նաև 75ամեակը իր ձեմարանին՝ հայ ձեմարանին, որ պիտի դառնար նշան ֓այալանճեան ձեմարան, ապա Հայկ եւ Մեղաքթթն Արսլանեան ձեմարան. ձեմարան՝ որ զբղապատճառն էր Համազգայինի ստեղծման եւ տակաւին կը մնայ առանցք իր կեղրոնական վարչութեան գոյութեան, կիզակէտը՝ իր ուշադրութեան:

Բնականարար այդպէս է, քանի որ ձեմարանը, ինչպէս զինք ծնող Համազգայինը, ինչպէս զինք ծնող Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, եւ ինչպէս զինք ծնող Հայրենիքը կը գտնուին նոր մարտահրաւրեաններու առջեւ, կամ վերանորոգ մարտահրաւրեաններու առջեւ 21րդ դարու այս արշալոյսին:

Այսօր, Համազգայինի հիմնադրութենէն 75 տարի ետք, մենք այդ ոգիին յաղթանակն է, որ կը տօնենք: Այդ յաղթանակը նուիրող ըրծուեցաւ Հայաստանի վերանկախացումով, եւ կրնանք այլեւս անվարան ըսել, որ լեցուած է խրամատը «մեր» եւ «անոնց» միջեւ: Չկայ այն խոր վիճակ, որ «մեզ» կը բաժնէր «անոնցմէ», եւ որ այնքան տագնապ էր յառաջացուած Շահմի հոգիին մէջ, եւ ծնունդ տուած սեփական կրթման մը կերտելու գաղափարին: Չեմ ժխտեր գոյութիւնը տարբերութիւններու, որ կան հայ ազգի տարբեր հատուածներուն միջեւ, բայց փաստօրէն մէկ է հայրենիքը իր հաւաքական ձգտումներով, իր երկրորդ, Հայ Դատի ու Հայաստանի հզօրացման նկատմամբ իր կեցուածքներով:

Եւ ճիշդ այս կէտին ալ առջեւ կանգ առնենք, ճշդելու համար մարտահրաւրեանները Համազգայինի եւ իր ձեմարաններուն - եւ այստեղ յոգնակի կը խօսիմ, քանի որ Պէյրութի կողքին կայ արդէն Մարտէջը, կայ ընդհանրապէս պատկանելութեամբ՝ Սիտնի, եւ ամէնօրեայ կամ միօրեայ վարժարաններու այս ամբողջ ցանցը, որ կը գործէ թեմական թէ՛ բարեսիրական կամ մշակութային կառոյցներու հովանիին ներքեւ:

Համոզուած եմ, որ երեք գլխաւոր մարտահրաւրեաներ ունինք մեր առջեւ 21րդ դարու այս սկիզբը:

Ա.- Սփիւռքահայ նոր սերունդի կրթութիւնը. ընդգծուող բարձր այստեղ սփիւռքահայն է, որովհետեւ երեւոյն վերապրողներու երրորդ, չորրորդ, եւ նոյնիսկ հինգերորդ սերունդներու կրթութիւնը այլեւս չի կրնար նոյնը ըլլալ, ինչ որ էր առաջին եւ երկրորդ սերունդներուն համար: Տարբեր են ժամանակները, տարբեր են պայմանները, տարբեր են ակնկալութիւնները: Սփիւռքի մէջ ծնած հայերու գաւակները, թոռները եւ ծոռները ունին ինքնուրուի պատկանելութեան եւ այլասերման մեծ հարցեր, որոնց լուծումները անոնք պիտի ստանան հայ դպրոցէն:

Բ.- Հայեցի կրթութեան որակի ապահովումը, եւ այս անգամ որակ բառն է, որ կ'ընդգծեմ, որովհետեւ չի կրնար այդ մտահոգութիւնը շունչեղ ուրեւէ ազգային վարժարան, որ տեւական մրցակցութեան մէջ պիտի ըլլայ այլ ու մանաւանդ ոչ հայ վարժարաններու հետ, ու նախանձախնդրութիւնը պիտի ունենայ լաւագոյնը մատուցելու իր աշակերտութեան՝ իր կրթութիւն, իր դաստիարակութիւն եւ իր ուսումը:

Գ.- Հայոց միասնականութեան ջատագովումը, եւ այստեղ ալ միասնականութիւնն է, որ կ'ընդգծեմ, միասնականութիւն, որուն զբօշակիւր պիտի հանդիսանայ հայոց կրթարանը՝ իր աշակերտութեան ներշնչելով մէկ ազգի պատկանելիութիւն, մէկ մշակութի տէր ըլլալու, մէկ հայրենիք ունենալու զգացումները:

Եւ սիրելիներ, Համազգայինը, իր անուան հաւատարմութեամբ, իր անուան իր անուան առումին հաւատարմութեամբ, եւ այստեղ ինչպէս չբարնչանալ այդ անուան կնքաւայր վաճառ նաւասարդեանի հեռատեսութեան վրայ, - պիտի գիտնայ 21րդ դարու այս սկզբին, իր ձեմարանները դարձնել հնոցը այդ ազգային միասնականութեան, եւ տիպար բնօրրանը, որուն պիտի ձգտին նմանիլ եւ հետեւել ընդ որ միւս հայ վարժարանները, Սփիւռքի նորահաս սերունդներուն տալով ազգաշունչ եւ որակաւոր այն կրթութիւնը, որով անոնք իրենց արժանի տեղը պիտի գրաւեն աշխարհի բարոյսին վրայ իր արժանաւոր մարդ եւ հաւատաւոր հայ:

Համակեց Սփիւռքը ամբողջ, առաջին հերթին Դաշնակցութեան համակիր գաւակները, մեր վարժարանները ամէնուրեք սնուեցան ձեմարանէն, իր հասցուցած մարդուժով, ու ազգային կրթութեան ջամբուրը դարձաւ ընդհանուր առաքելութիւնը:

Այսօր, Համազգայինի հիմնադրութենէն 75 տարի ետք, մենք այդ ոգիին յաղթանակն է, որ կը տօնենք: Այդ յաղթանակը նուիրող ըրծուեցաւ Հայաստանի վերանկախացումով, եւ կրնանք այլեւս անվարան ըսել, որ լեցուած է խրամատը «մեր» եւ «անոնց» միջեւ: Չկայ այն խոր վիճակ, որ «մեզ» կը բաժնէր «անոնցմէ», եւ որ այնքան տագնապ էր յառաջացուած Շահմի հոգիին մէջ, եւ ծնունդ տուած սեփական կրթման մը կերտելու գաղափարին: Չեմ ժխտեր գոյութիւնը տարբերութիւններու, որ կան հայ ազգի տարբեր հատուածներուն միջեւ, բայց փաստօրէն մէկ է հայրենիքը իր հաւաքական ձգտումներով, իր երկրորդ, Հայ Դատի ու Հայաստանի հզօրացման նկատմամբ իր կեցուածքներով:

Եւ ճիշդ այս կէտին ալ առջեւ կանգ առնենք, ճշդելու համար մարտահրաւրեանները Համազգայինի եւ իր ձեմարաններուն - եւ այստեղ յոգնակի կը խօսիմ, քանի որ Պէյրութի կողքին կայ արդէն Մարտէջը, կայ ընդհանրապէս պատկանելութեամբ՝ Սիտնի, եւ ամէնօրեայ կամ միօրեայ վարժարաններու այս ամբողջ ցանցը, որ կը գործէ թեմական թէ՛ բարեսիրական կամ մշակութային կառոյցներու հովանիին ներքեւ:

Համոզուած եմ, որ երեք գլխաւոր մարտահրաւրեաներ ունինք մեր առջեւ 21րդ դարու այս սկիզբը:

Ա.- Սփիւռքահայ նոր սերունդի կրթութիւնը. ընդգծուող բարձր այստեղ սփիւռքահայն է, որովհետեւ երեւոյն վերապրողներու երրորդ, չորրորդ, եւ նոյնիսկ հինգերորդ սերունդներու կրթութիւնը այլեւս չի կրնար նոյնը ըլլալ, ինչ որ էր առաջին եւ երկրորդ սերունդներուն համար: Տարբեր են ժամանակները, տարբեր են պայմանները, տարբեր են ակնկալութիւնները: Սփիւռքի մէջ ծնած հայերու գաւակները, թոռները եւ ծոռները ունին ինքնուրուի պատկանելութեան եւ այլասերման մեծ հարցեր, որոնց լուծումները անոնք պիտի ստանան հայ դպրոցէն:

Բ.- Հայեցի կրթութեան որակի ապահովումը, եւ այս անգամ որակ բառն է, որ կ'ընդգծեմ, որովհետեւ չի կրնար այդ մտահոգութիւնը շունչեղ ուրեւէ ազգային վարժարան, որ տեւական մրցակցութեան մէջ պիտի ըլլայ այլ ու մանաւանդ ոչ հայ վարժարաններու հետ, ու նախանձախնդրութիւնը պիտի ունենայ լաւագոյնը մատուցելու իր աշակերտութեան՝ իր կրթութիւն, իր դաստիարակութիւն եւ իր ուսումը:

Գ.- Հայոց միասնականութեան ջատագովումը, եւ այստեղ ալ միասնականութիւնն է, որ կ'ընդգծեմ, միասնականութիւն, որուն զբօշակիւր պիտի հանդիսանայ հայոց կրթարանը՝ իր աշակերտութեան ներշնչելով մէկ ազգի պատկանելիութիւն, մէկ մշակութի տէր ըլլալու, մէկ հայրենիք ունենալու զգացումները:

Եւ սիրելիներ, Համազգայինը, իր անուան հաւատարմութեամբ, իր անուան իր անուան առումին հաւատարմութեամբ, եւ այստեղ ինչպէս չբարնչանալ այդ անուան կնքաւայր վաճառ նաւասարդեանի հեռատեսութեան վրայ, - պիտի գիտնայ 21րդ դարու այս սկզբին, իր ձեմարանները դարձնել հնոցը այդ ազգային միասնականութեան, եւ տիպար բնօրրանը, որուն պիտի ձգտին նմանիլ եւ հետեւել ընդ որ միւս հայ վարժարանները, Սփիւռքի նորահաս սերունդներուն տալով ազգաշունչ եւ որակաւոր այն կրթութիւնը, որով անոնք իրենց արժանի տեղը պիտի գրաւեն աշխարհի բարոյսին վրայ իր արժանաւոր մարդ եւ հաւատաւոր հայ:

ՀԱՅԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

«ՎՐԱԶԵԱՅ ԱՃԱՌԵԱՆ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՆՇԵՑ «ՆԱՐԵԿ»Ի 1000ԱՄԵԱԿԸ

Մեկ տարի է վեր երեւանի «Հրաչեայ Անտան» համալսարանը կ'աշխատի Գրիգոր Նարեկացիի «Մատեան ողբերգութեան» ստեղծագործութեան 1000ամեակին նուիրուած ժողովածուի մը վրայ, որ իր բնոյթով առաջին փորձն է մեր իրականութեան մէջ:

«Քան ի խորոց սրտի առ Նարեկացի» ժողովածուն բաղկացած է «Նարեկի հագրամնայ խորհուրդը» յառաջաբանէն, «Նարեկեան պատարագ» երկխօսութենէն, ինչպէս նաև՝ «Մեծերը մեծագոյնին մասին» եւ «Անտանցիներուն նարեկապատմը» բաժիններէն:

Այս մասին խօսեցաւ «Հրաչեայ Անտան» համալսարանի նախագահ Աւագ Խաչատրեան, 27 Մայիսին «Առնօ Բարաջանեան» համերգարահին մէջ բացուող կատարելով «Մատեան ողբերգութեան» գործի 1000ամեակին նուիրուած համալսարանական գիտական նստաշրջանին:

Ըստ Աւագ Խաչատրեանի, ընթերցողը այդ գիրքով պիտի ծանօթանայ Նարեկացիին ուղղուած մեր մեծերուն բնութագրական եւ մեծարանքի խօսքերուն, ինչպէս նաև՝ քանի մը վաստակաշատ գիտնականներու համառօտ գեղուցումներուն:

Գրիգոր Նարեկացիի ստեղծագործութեան տարբեր երեսներուն մասին գիտաժողովին տրուեցան եօթը գեղուցումներ, զորս ներկայացուցին ակադեմիկոսներ Սերգէյ Սարիբեան, Մարգիս Յարութիւնեան, գիտութիւններու դոկտորներ Պօղոս Խաչատրեան, Անիթրա Գրուիսեան, Ալիկ Խահանկեան, Հրաչեայ Թամրազեան եւ Գեղամ Կիրակոսեան:

ԳՊՐՈՑԱՇԻՆՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ՝ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻՆ ՄԷՋ

Գեղարքունիքի մարզպետարանի քաղաքաշինութեան վարչութեան տուեալներով, 2003 թուականին զարգացող տարածքներում համար մարզին պետական պիտուէն պիտի յատկացուի 60 միլիոն դրամ:

Մարզուած է վերանորոգման աշխատանքներ կատարել կարգ մը զարգացուած մէջ, որոնց շէնքերը արտաքին միջավայրի ազդեցութենէն դուրս պահելու համար նախատեսուած է 30 միլիոն դրամ:

30 միլիոն դրամ եւս Հայաստանի կառավարութիւնը յատկացուցած է մարզին՝ ձմարարակ քաղաքի պանդոկային համալիրը զարգացական շէնքի վերածելու համար: Վերանորոգման եւ շինարարական աշխատանքները պիտի աւարտին մինչեւ կրթական նոր տարեշրջանին սկիզբը:

ԱՊԱՀՈՎ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿ՝ ԱՍԿԵՐԱՆԻ ԵՐՋԱՆԻ ԽՐԱՄՈՐԹ ԳԻՒՂԻՆ ՄԷՋ

Միջազգային կարմիր խաչի կազմակերպութեան Ստեփանակերտի գրասենեակին կողմէ իրականացուող «Ապահով խաղաճարակներ երեխաներուն համար» ծրագիրի շրջանակներուն մէջ, վերջերս Ասկերանի մարզին նորամուտ գիւղի մէջ կատարուած կատարուեցաւ խաղաճարակի մը: Բացման արարողութեան ներկայ էին Արցախի բարձրաստիճան պաշտօնատարներ եւ միջազգային կազմակերպութիւններու ներկայացուցիչներ:

Ըստ Հայաստանի մէջ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան ներկայացուցչութեան, Լեռնային Ղարաբաղի իշխանութիւններուն եւ քննչութեան համագործակցութեամբ մշակուած այս ծրագիրին համաձայն, այսպիսի խաղաճարակներ պիտի կառուցուին նաեւ Մարտունիի, Ասկերանի, Հատրուտի, Մարտակերտի եւ Շուշիի շրջաններու 30 բնակավայրերուն մէջ:

Կը նախատեսուի ծրագիրը ամբողջութեամբ իր աւարտին հասցնել մինչեւ տարեկեր:

ԴԵՄԱՐԱՆԻ ԾԱՇԿԵՐՈՅԹԸ



Շաբաթ, 7 Յունիս 2003ին, Սին Էլ Ֆիլի «Մէթրոփոլիթէն» պանդոկին շքեղ արահներուն մէջ տեղի ունեցաւ Համազգայինի Մ. Է. Արսլանեան ձեմարանի ճաշկերպը: Միջոցառումը կը հովանաւորէր Համազգայինի կեղրոնական վարչութիւնը, կը նախագահէին տէր եւ տիկին Անու Եւ Սելաթ Թնճուկեանները: Երեկոյ էին Լիբանանի թեմի Առաջնորդ Գեղամ եպ. Խաչատրեան, Հայ Կարողիկէ պատրիարքութեան ընդհանուր փոխարող Վարդան եպ. Աշքարեան, Հայաստանի դեպիան Արեգ Յովհաննիսեան, Հ. Յ. Բիւրդի եւ Լիբանանի կեղրոնական Կոմիտէի ներկայացուցիչները, Համազգայինի կեղրոնական վարչութեան անդամական Կոմիտէի ղեկներ, ձեմարանականներ, ուսուցիչներ, Համազգայինի ու ձեմարանի բարերարներ: Ընդամենը շուրջ 400 հոգի: Երեկոյին հաղորդակալարութիւնը կատարեց դերասան ու բեմադրիչ Վիգէն Ստեփանեան: Խօսք տար իր կազմակերպիչ յանձնախումբին կողմէ տիկին Մակի Պապիկեան, ձեմարանի տնօրէնուրեան անուրուի՝ Տիգրան Ճիւլպաշեան, Համազգայինի կեղրոնական վարչութեան կողմէ՝ Վրէժ-Արմէն Արթիւրեան: Կատարուեցաւ սահիկներու ցուցադրութիւն: Տողանցող նկարները, որոնք 1930էն մինչեւ մեր օրերը երկարող Հայ ձեմարանի պատմութեան կարեւոր դրուագները կը ներկայացնէին, հին ու նոր շէնքերու, տնօրէններու, ուսուցիչներու, աշակերտական խումբերու եւ շրջանաւարտներու լինանկարներու ընդմէջէն վերաբարձեցին ձեմարանական եպիսկոպոստներու: ձեմարանականները յուսով մէկ վերապրեցան իրենց դարձակալական քաղաքի օրերը: Երեկոյ իրենց երգերով ձուլացուցին նախ Միլի Հարպոյեան, ապա այս նպատակով լաւ կապիտ Պերոպ Իրաւիրուած հայրենի տաղանդաւոր երգչուհիներ Չարուհի Բարայեան եւ Վարդուհի Վարդանեան: Մինչեւ ատուտեան ժամերը տեսած ջերմ մթնոլորտը ու գեղարուեստական վայելքը արդիւնաւորուեցաւ նաեւ ձեմարանի Սանտու Յունուի ինպատկաւ կատարուած սրտաբուխ նուիրատուութիւններով, որոնցմէ գոյացաւ շուրջ 65 հազար տոլար:

Մեր կրթութեան շնորհիւ սակայն մէկ իրողութիւն, նախքան դալիք մարտահրաւրեաններուն մասին խօսիլ: ձեմարանին յաջողութիւնը չի կայանար միայն կամ պարզապէս անոր մէջ, որ սերունդները կրթից ազգային ոգիով, հայու արժանապատուութեան գիտակցութեամբ, այլ նաեւ անոր մէջ, որ նոյն այդ դաստիարակութիւնը ճաւաղայնացնէ ձեմարանի պատերէն անդին,

Երկար խորհրդակցութիւններէ ետք, նիւթական մեծ զոհողութիւններով, խումբ մը հաւատաւոր հայեր, ուրեմն, 1928 Մայիս 28ին Գահրէի մէջ հիմը կը դնեն Համազգային Ընկերակցութեան՝ շուտով հաստատելու համար, աւելի հայահոծ Պէյրութի մէջ՝ Հայ ձեմարանը, ազգային ոգիով թրծելու համար հայ նոր սերունդները, եւ հասցնելու համար ապագայ դաստիարակները իրերալալոր սերունդներու: Ազգային ոգիով, որովհետեւ ճիշդ այդ ազգային ոգիին զէմ էր պայքարը: Ազգային ոգիով եւ միտքամանակ համամարդկային արժեքներով, որուն մանկավարժական ամէնէն յառաջադէմ սկզբունքներով եւ ամբողջական հայն ու ամբողջական մարդը կերտելու առաջադրանքով:

Ահա թէ ի՞նչ ձեռնոց էր մեր առջեւ նետուածը, եւ գիտելու, գիտելու, գիտելու բոլորս, պատմութիւնը վկայ՝ թէ տէր դուր, գիտելու բոլորս, պատմութիւնը վկայ՝ թէ ինչպէս վերցուց այդ ձեռնոցը ձեմարանը՝ իր երից լուսապատկ հիմնադիրներուն, Լեւոն Շանթի եւ Նիկոլ Աղբալեանի առաջնորդութեամբ եւ անոնց գործակիցներուն ու յետնորդներուն գերմարդկային ճիգերով: Մնացեալը պատմութիւնն է, եւ ձեզի հանօթ պատմութիւն: Հոս կ'ուզեմ շնորհիւ սակայն մէկ իրողութիւն, նախքան դալիք մարտահրաւրեաններուն մասին խօսիլ: ձեմարանին յաջողութիւնը չի կայանար միայն կամ պարզապէս անոր մէջ, որ սերունդները կրթից ազգային ոգիով, հայու արժանապատուութեան գիտակցութեամբ, այլ նաեւ անոր մէջ, որ նոյն այդ դաստիարակութիւնը ճաւաղայնացնէ ձեմարանի պատերէն անդին,

Orient plus
ARABIA TRAVEL & TOURISM
Touch New Worlds
Jarna
\$319
8 days - Direct Charter Flight
Every Tuesday starting from 8 July
Other Destinations
Boat Trip to Cyprus 3 Days Cyprus & Greece
\$190 \$425
BOOK THIS WEEK AND GET 15% DISCOUNT
ASK FOR OUR FREE CREDIT FACILITIES
01.900598, 901598
03.258336, 256254
www.orientplus.com

ԾԱԽՈՒ ՇՔԵՂ 3ԱՐԿԱՐԱԺԻՆ
●Ազգրապ. Ենթր. 3 մեջ, 175 քառ. մետր, 13 ցնցասեցեակ, հիւրապարտի, ճաշասեցեակ, 2 բաղնիք, 4 պատշգամ, գեղատեսիլ դիրք: Գին՝ 80.000 \$: Ըեռ. 03 - 298410:

ԾԱԽՈՒ 3ԱՐԿԱՐԱԺԻՆ
Մեկնումի առիթով, 3 ցնցասեցեակ, հիւրապարտի, ճաշարարի, կախաւորուած, հեռաձայնով, ինքնաշարժ անճանակ կառուուած, եւ կալուածաթղթով (քափու), 24 ժամ ելեկտրակառուութիւն, անճանակ ցրողով, 120 քառ. մետր շինութիւն + 110 մետր պատշգամ, Ա. յարկ, Պուրճ Ըմուտ, Կիլիկիա թաղ: Գին փոխառման 70,000 \$ միայն 45,000 \$:
Ըեռ. 01 - 258887 եւ 03 - 233978



Կնոջական

ԻՆՉ Է ԷՄ. ԱՐ. ԱՅ.Ը

«Էմ. Ար. Այ.»ը կամ մագնիսական հնչակա-
նութեամբ ցկարը քննութեան շատ յառաջադեմ
թեքնիկ մըն է, որ պետք չէ մտահոգէ:

«Էմ. Ար. Այ.»ը չի ցաւցներ, ցկարին որակա-
կան բարելաման նպատակով երակէն սրսկում
մը անհրաժեշտ կը ցկատուի որոշ պարագանե-
րու:

Եթէ «ըլուսթրոֆոպ» էք, այսինքն փակ տեղե-
րը կ'անհանգստացնեն ձեզ, ցախապէս բժիշկը
տեղեակ պահեցէք: Իմացէ՛ք սակայն, որ գործի-
քը երկու ծայրամասերուն բաց բաժիններ ունի,
նետեաքար ամբողջովին բացտարկուած չէք:

Որեւէ անհանգստութեան պարագային, ցեր-
քին հեռաձայնով մը կրնաք կապուիլ դուրսի
անձնակազմին հետ:

Միակ անպատեհութիւնը այն է, որ կշռութա-
ւոր եղանակին հետ պետք է բոլորովին անշարժ
մնաք եւ համբերատար ըլլաք:

Գիտէ՛ք, թէ բժշկական մարզին մէջ այս շատ
կարեւոր իրադարձութեան հեղինակը հայ մըն է:
Այո՛, «Էմ. Ար. Այ.»ի գիտարարը Իեմոն Տա-
մատեան անուցով հայտարարի մըն է:

ԿԱՐԵՆՈՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

«Էմ. Ար. Այ.»ի քննութեան ենթարկուող ամօ-
քի փորով ցերկայանալու պարտադրանքին տակ
չէ:

Այս քննութեան ենթարկուողը պետք է նախա-
պէս հանգի իր ակնոցները, ծամակալները, գար-
դեղէնները, բայց կրնայ պահել... ամուսնական
մատանին:

Յղի կիները այս քննութեան անաչ պետք է
նախապէս տեղեակ պահեն բժիշկը, նոյնպէս ակ-
ազմ, էքզեմ կամ գերզգայնութիւն ունեցողնե-
րը:

ՍՏՈՒԳԵՆԸ ՄԵՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ



ՃԻՇԴ ՉԵՒՈՎ ՕԳՏՈՒԹՅՈՒՆՔ ԱՐԵՒԷՆ ԵՒ ԾՈՎԷՆ

1
Արեւը տրամադրու-
թիւն կը բարձրացնէ:
ՃԻՇԴ: Բոլոր բժիշկնե-
րը կը հաստատեն այս տե-
սակէտը եւ բժշկական բա-
ցատուութիւն կու տան
անոր: Այսպէս, արեւուն
լոյսը աչքերուն ճամբով
թափանցելով կը հաւասա-
րակուէ տրամադրու-
թեան հորմոնը (մելաթո-
նինը), որ իր կարգին մեր
տրամադրութիւնը կը
բարձրացնէ եւ լաւատես
կը դարձնէ:

2
Երկար ժամեր արեւուն
տակ կենայր կը ձերացնէ
մարդը:
ՃԻՇԴ: Այս մէկը եւս
բժշկականօրէն փաստը-
ւած է եւ ֆրանսական
«Լօրէալ» տարրալուծա-
րանի ուսումնասիրու-
թիւնները եկած են հաս-
տատելու, թէ երկարատեւ
արեւուն լոգանքները մին-
չեւ 20 տարիով կը ձերացը-
նեն մորթը:

3
Թուի մորթ ունեցող-
ները արեւահար չեն ըլլար:
ՍԽԱ: Երկարատեւ եւ
առանց պաշտպանող սերի
արեւուն տակ կենայր վնաս-
ակար է բոլորին: Ժիշկէ,
որ թուիները լաւելեալ դի-
մարողականութիւն մը
ունին, բայց պէտք չէ շահա-
գործեն զայն:

4
Ջուրին մէջ չենք այ-
րիր:
ՍԽԱ: Արեւուն ճառա-
գայթնները կը թափանցեն
ջուրին եւ ալիքներուն մէջ
եւ խոշորացոյցի դերը կա-
տարելով՝ այրուածքները
կրնան շատ աւելի ծանր
ըլլալ:

5
Եթէ 20էն աւելի խալ
(պէնք) ունիք, թելադրելի է
արեւուն չպարզել մարմինը:
ՃԻՇԴ: Պէտք է
ըմբռնողօրէն հետեւիլ
անոնց եւ բժիշկին դիմել,
եթէ նկատէք, որ անոնցմէ
մէկը ձեւ, չափ կամ գոյն
կը փոխէ: Լաւ քննել նաեւ
կրնակը եւ ապա սրունք-
ները: Մարմինն այս մա-
սերն են, որ աւելի ենթա-
կայ են մորթի քաղցկեղի:

6
Որքան արեւուն պար-
զուինք, այնքան գոյն կը
ստանանք:
ՍԽԱ: Տասներորդ օրը
արդէն մորթը առած կ'ըլ-
լայ իր գոյնը, որմէ ետք
օրական կէս ժամ արեւու
լոգանքը բաւարար է, որ
այդ գոյնը պահպանուի:

7
Արեւը կը դարձնան է
բշտիկները:
ՃԻՇԴ: Ամրան եղանա-
կին արեւուն ազդեցու-
թեան տակ բշտիկները կը

չորնան եւ կ'անհետանան:
Բայց, դժբախտաբար, աչ-
նանամուտին անոնք
վերստին կը յայտնուի մեծ
թափով:

8
Մորթին վրայ սրճա-
գոյն արատները չափա-
զանցուած արեւու պատ-
ճառով են:
ՃԻՇԴ: Այս արատները
կը յայտնուին առաւելա-
բար բաց գոյնի մորթ ու-
նեցողներուն վրայ: Միւս
կողմէ, կարգ մը դեղահա-
տեր իրենց կարգին կը
նպաստեն այս արատնե-
րու յայտնութեան:

9
Տարի մը առաջ գնուած
եւ գործածուած արեւէն
պաշտպանող սերը
կրնանք տարի մը ետք օգ-
տագործել:
ՍԽԱ: Անգամ մը որ
սերին սրուակը բացուած
է, անոր գործածութեան
պայմանաժամը 6 ամիս է,
որմէ ետք պէտք է զայն
թափել: Չբացուած
սրուակը կրնաք 3 տարի
պահել:

10
Վտանգէ գերծ ենք խո-
շոր հովանոցին տակ:
ՍԽԱ: Յատկապէս՝
եթէ մեր ոտքին տակ աւագ
կամ պէթոն է: Հետեա-
բար պէտք չէ երկար ժա-
մեր հովանոցին տակ
նստիլ կամ պառկիլ, այլ
կէս ժամը անգամ մը ջուր
մտնել եւ կրկին վերա-
դառնալ:


11
Մորթի քաղցկեղի աւե-
լի եւս ենթակայ են անոնք,
որոնք մինչեւ 12 տարեկան
բազմաթիւ անգամներ
արեւահար եղած են:
ՃԻՇԴ: Ահա թէ ինչո՛ւ
երեխաներուն կանուխէն
պէտք է վարժեցնել
զլիարկ եւ ակնոց կրել,
սեր գործածել եւ կէսօր-
ւան ժամերուն արեւուն
տակ չխաղալ: Թելադրելի
է, որ նոյնիսկ լուքին փոք-
րերը թեթեւ քի - շըրք մը
կրնն իրենց գգալուն մոր-
թը պաշտպանելու համար:

12
Մորթը կը պահէ անց-
եալի այրուածքներուն յի-
շատակը:
ՃԻՇԴ: Հոն, ուր մորթը
տարիներ առաջ ծանր այ-
րուածքներ կրած է, կը
մնայ զգալուն եւ արեւուն
առաջին ճառագայթնե-
րուն հետ մինչեւ իսկ կը
ցաւի: Թելադրելի է մարմ-
նին այդ մասերը հեռու
պահել արեւէն:

ԱՌՈՂՋԱՊԱՆԱԿԱՆ

ԻՆՉՊԷՍ ՓԱԹԹԵԼ ՎԻՐԱԻՈՐ ԹԵՒ ՄԸ

Վիրաւոր կամ ցաւող թեւ մը պէտք է անշարժացնել
մինչեւ մասնագէտ բժիշկին հասնիլը: Թեւը անշարժացը-
նելու լաւագոյն միջոցը զայն եռանկիւն էշարփով մը վի-
զէն հաստատելն է, իսկ էշարփ բոլոր տուններուն մէջ
կը գտնուի: Այն պահուն, երբ երկրորդ անձ մը կը հաս-
տատէ էշարփը, խնդրոյ առարկայ անձը պէտք է առողջ
ձեռքով բռնած պահէ հիւանդ թեւը:
Հետեւինք չորս նկարներուն եւ շարքը պահելով՝ սոր-
վինք էշարփը հաստատել հիւանդ թեւին շուրջ:



ԽՈՒՍԱԳԻՐ ԳԵՏՆԱԽՆՉՈՐՈՎ ԵՒ ՊՂՊԵՂՈՎ «ՄԻԼ ՖԵՕՅ»



- Բաղադրութիւն՝ 4 անձի համար.
- ◆ 800 կրամ գետնախնձոր
- ◆ 2 կարմիր պղպեղ
- ◆ 2 կանաչ պղպեղ
- ◆ 2 պճեղ սխտոր
- ◆ խոշոր սոխ մը
- ◆ Ռեհանի քանի մը տերեւ
- ◆ 2 ապուրի դգալ ձիթախիլ
- ◆ 40 կրամ կարագ
- ◆ Աղ, սեւ փոշի պղպեղ

Պատրաստութիւն.
Պղպեղները փուռին մէջ եփել, ապա՝ կեղուել եւ բա-
րակ, երկար կտորտել:
Գետնախնձորները կեղուել, 10 վայրկեան շոգիով
եփել, ապա՝ կտոր շերտել:
Կեղուել եւ ճզմել սխտորը, մանրել սոխը եւ կարմրցը-
նել տաք ձիթախիլին մէջ: Աւելցնել շերտուած պղպեղ-
ները եւ 5 վայրկեան եփել թեթեւ կրակի վրայ:
Ափսէի մը յատակը կարագով ծեփել եւ յարկ - յարկ
չարել գետնախնձորները, կանաչ պղպեղները, գետ-
նախնձորները, կարմիր պղպեղները, եւ վերջացնել գետ-
նախնձորի յարկով մը: Երեսը քանի մը կտոր կարագ գե-
տեղել, ալիւմինիում թուղթով ծածկել եւ 210 ջերմաս-
տիճանով եփել 20 վայրկեան: Եփի կիսուն ալիւմինիում
թուղթը հանել եւ բաց եփել:
Հրամցնել տաք՝ մսեղէնի մը կողքին:



Պատրաստեց՝ ՇՈՒԹԻԿ ՄԱԻՍԱԳԱԼԵԱՆ

«ԱԶԳԱԿ»-ի
ՀԵՌՈՒՋԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ
«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել
հետևելալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:



Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

ԱՇԽԱՐՀ



ՀԱՏՐԱԿԻ ԵՒՐՈՊԱՅԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՄՈՅԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅՐԵՆԻ ՄԱՐԶԻԿՆԵՐ ԿԸ ՊԱՅՔԱՐԻՆ ՊԱՐԱԳ-ԼՈՒԽԻ ԳԻՐՔԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Պուրոյ մէջ (Թուրքիա) տեղի ունեցող ճատրակի եւ ըրպայի անհատական ախոյեանութեան 10րդ հանգրուանի մրցումներէն ետք, հայրենի վարպետ Լեւոն Արոնեան կը գրաւէ ընդհանուր դասաւորման 2րդ դիրքը (7 կէտով), կէս կէտով միայն ետ մնալով պարագուլուխի դիրքը գրաւող Ազմայ Պարաչիլուէն (Վրաստան):

10րդ հանգրուանի մրցումներուն, Արոնեանի նման յաղթանակ արձանագրեցին նաեւ՝ Արտաշէս Մինասեան եւ Աշոտ Անաստասեան: Գաբրիէլ Սարգսեան հաւասարութիւն մը արձանագրեց, մինչ Սմբատ Կպուտեան, Ռաֆայէլ Վահանեան եւ Կարէն Ասրեան պարտութիւններ կրեցին:

Ազդկանց մրցաշարքին Տրդ հանգրուանի մրցումներէն ետք, Լիլիթ Սկրտչեան եւ Էլինա Դանիէլեան 5,5ական կէտով բաւական ծոտ են պարագուլուխի դիրքը գրաւող Ալիսա Գալիմովային: Իսկ Լիլիթ Քալոյեան եւ Գոհար Սլլանեան, իրենց կատարած վերջին մրցումներուն յաղթանակներ արձանագրելով, ընդհանուր դասաւորման մէջ բարելաւեցին իրենց դիրքերը:

ՔԷՉԷՊԱՇԵԱՆ, ՊԱՐԻՔԵԱՆ ԵՒ ՔԷՇՈՇԵԱՆ՝ ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԴԻՐՔԵՐՈՒ ՎՐԱՅ



Լիբանանի փիցկ փոցկի ֆետերասիոնի փոխ նախագահ՝ Անիտ Արաքժի, բաժակը կը յանձնէ Լարա Քէչեպաշեանի

Լիբանանի փիցկ փոցկի ֆետերասիոնի երէկ հրատարակեց Յունիս ամսուան դասաւորումը, հիմնուելով զարնանային մրցաշարքին եւ Լիբանանի բաժակի մրցաշարքին ընթացքին մարպիկներուն արձանագրած արդիւնքներուն վրայ:

Վերոնշեալ երկու տիտղոսներուն տիրացած Հ.Մ.Ը.Մ.ական Լարա Քէչեպաշեան այժմ կը գրաւէ աղբկանց ընդհանուր դասաւորման պարագուլուխի դիրքը (60 կէտով), 13 կէտի առաւելութիւն մը ունենալով Հ.Մ.Ը.Մ.ական Լիլիթ Պարիքեանի վրայ: Տրդ դիրքին վրայ կը գտնուի Հ.Մ.Ը.Մ.ական Նոէլ Քէշիշեան, որ ունի 33 կէտ:

Տրդ դասաւորման մէջ, Հ.Մ.Ը.Մ.ական Ռաֆիկ Շէմսեան կը գրաւէ 8րդ դիրքը, Մայիք Թաուիլի (Հ.Մ.Ը.Մ.)՝ 33րդ դիրքը: 10րդ դիրքը, իսկ զատկալ Թաուիլի (Հ.Մ.Ը.Մ.)՝ 33րդ դիրքը:

ՊԱՐՔԻԿՆԵՐ	ԳՐԱՆ. ՎՐԱՅ	ԲԱԺԱԿԻ ԿԵՏ ՄՐՅ.	ՄՐՅ.
1. Լարա Քէչեպաշեան (Հ.Մ.Ը.Մ.)	24	36	60
2. Լիլիթ Պարիքեան (Հ.Մ.Ը.Մ.)	20	27	47
3. Ռուսա Հրաչիյան (Ք.Ֆարշիմա)	16	24	40
4. Ռիթա Պրսէյպեան (Ք.Ֆարշիմա)	16	21	37
5. Ղաւտա Ըլիլայա (Օլիմպիք)	0	33	33
Նոէլ Քէշիշեան (Հ.Մ.Ը.Մ.)	12	21	33
7. Ռանա Մարշի (Մէն ժոպէֆ)	12	18	30
8. Քրիսթի Շալիբա (Ժամախոր)	12	15	27
9. Թալա Հաուիլի (Ռիստի)	8	15	23
10. Թոպէֆ Չիլայա (Մէն ժոպէֆ)	8	15	23
11. Լիլի Համ (Ք.Ֆարշիմա)	8	12	20
16. Լարա Չէլիլտոսի (Ռիստի)	4	9	13
17. Լարիսա Շիլայա (Ռիստի)	12	0	12
20. Նաթալի Պասիլի (Ժամախոր)	8	0	8

ՏՊԱՐ	ԳՐԱՆ. ՎՐԱՅ	ԲԱԺԱԿԻ ԿԵՏ ՄՐՅ.	ՄՐՅ.
1. Ռաշիտ Պրպաօ (Ռիստի)	24	33	57
2. Մոհամէտ Հապաշ (Ռիստի)	16	36	52
3. Ռուսա Հրաչիյան (Ռիստի)	16	27	43
4. Մոհամէտ Շըրքաուի (Ռիստի)	20	21	41
5. Ալիքիս Նաժմ (Անդրանիկ)	8	30	38
6. Ժոպէֆ Շալիբա (Անդրանիկ)	12	24	36
7. Ֆատի Ասիս (Անդրանիկ)	8	24	32
8. Ռաֆիկ Շէմսեան (Հ.Մ.Ը.Մ.)	12	18	30
9. Մարուսա Պրպիլի (Ռիստի)	12	18	30
10. Մայիք Թաուիլի (Հ.Մ.Ը.Մ.)	8	21	29
13. Ռուսա Սէյֆետտին (Լիբ. բանակ)	8	15	23
14. Սահակ Պետրիսեան (Անդրանիկ)	8	12	20
15. Մուսաբա Տարրուքի (Լիբ. բանակ)	4	15	19
33. Թալալ Թաուիլի (Հ.Մ.Ը.Մ.)	0	9	9

ԹԵՆԻՍ

ՍԱՐԳՍԵԱՆ ՊԱՐՏՈՒԵՑԱԲ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ՝ ՅԱՂԹԱԿԱՆ

Հալի մէջ (Գերմանիա) տեղի ունեցող թենիսի միջազգային մրցաշարքին Ա. հանգրուանի մրցումներուն, հայրենի մարպիկ Սարգիս Սարգսեան 7-5 եւ 6-1 արդիւնքով պարտութիւն մը կրելէ ետք թիւ 1 դասուած Վուիցերիացի Ռոմէ Ֆետերերէն, դուրս մնաց մրցաշարքին:

Մրցաշարքին դուրս մնաց նաեւ 4րդ դասուած Երգենի Քաֆէլիքով (Ռուսիա) 6-1, 6-7 եւ 7-6 արդիւնքով պարտութիւն մը կրելէ ետք Քարոլ Քուլչերայէն (Սլովակիա):

● ՊԻՐՄԻՆԿՎԵՍԻ մէջ (Բրիտանիա) տեղի ունեցող թենիսի աղջկանց միջազգային մրցաշարքին Ա. հանգրուանին երէկ կատարած իր մրցումին, Վուիցերիացի Մարի-Գայեանէ Միքայէլեան 6-1 եւ 6-2 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց, պարտութեան մատնելով Չուլանա Օնտրասովան (Չեխիա):

Տրդ դասուած Նաթալի Տըշի (Ֆրանսա) 6-3 եւ 6-2 արդիւնքով անակնկալ պարտութիւն մը կրեց ռուս Մարիա Շարափովային:

● ԼՈՆՏՈՆԻ մէջ (Բրիտանիա) տեղի ունեցող «Սթէյլա Արթուս» միջազգային մրցաշարքին Բ. հանգրուանին երէկ կատարած իր մրցումին, բրիտանացի Կրէկ Ռուսետաքի յաջողեցաւ 6-4 եւ 6-4 արդիւնքով պարտութեան մատնել մարտքի Հիշամ Արապիին:



Միքայէլեան

ՊՕՂՈՍԵԱՆ ՅՈՒՍԱԽԱՐ՝ ԷՍՓԱՆԻՈՒԼԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԷՆ

Սպանական էսփանիոլ ակումբին մաս կազմող եւ Ֆրանսայի Ֆուլթայի ազգային խումբին միջազգային նախկին մարզիկ Ալէն Պոլոսեան զոլջացած կը թուի ըլլալ այդ կազմին միացած ըլլալուն համար, որովհետեւ Սպանիոյ Ֆուլթայի ախոյեանութեան 2002-2003 եղանակին երբեք դաշտերուն վրայ չերեցաւ եւ միշտ ալ նկատի առնուեցաւ իրրեւ պահեստի մարզիկ:

«Ակումբի պատասխանատուներուն եւ մարզիչին կողմէ ինքզինքս բաւական խաբուած կը զգամ, որովհետեւ անոնք ինծի ստիճանները չեն տար դաշտ ներկայանալու, պարզապէս որպէսզի ինծի չվճարեն: Արդէն իսկ թերահաւատ




Ալէն Պոլոսեան

էի, երբ անոնց հետ պայմանագրութիւն ստորագրեցի», կ'ըսէ Պոլոսեան: Ըստ Պոլոսեանի եւ էսփանիոլի միջեւ կնքուած մրցումներու մասնակցէր:

ՇՈՒՍԱԽԵՐ 2006Ի ԱԻԱՐՏԻՆ ՊԻՏԻ ՀԵՌԱՆԱՅ ՖՈՐՄԱԻԼԱ ԻԷՆ

Ֆորմիլա 1ի աշխարհի ախոյեան, գերմանացի Միքայէլ Շուլցերը, որ անցնող քանի մը օրերուն ընթացքին իտալական խումբին՝ Ֆեռարիի հետ իր պայմանագրութիւնը երկարաձգեց մինչեւ 2006 թուական, նոյն այդ տարին ան պիտի լքէ Ֆորմիլա 1ի իր ասպարէզը, յայտնեց անոր գործավարը Ուիլի Ուեպլը, գերմանական մարզաթերթի մը հետ իր կատարած հարցազրոյցին ընթացքին:



Միքայէլ Շուլցեր

«Նկատի ունենալով, որ 2006 եղանակին լաւարտին, այսինքն՝ Յունուար 2007ին ան 38 տարեկան պիտի ըլլայ, Շուլցերը պիտի հեռանայ Ֆորմիլա 1ի աշխարհէն, որովհետեւ ինչ որ կ'իրագործէ ներկայիս կամ՝ իրագործած է նախորդ տարիներուն», յայտնած է Ուեպլը:

ԵՒՐՈ - 2004Ի ԶՏՈՒՄԻ ՄՐՅՈՒՄՆԵՐ

ԵՒՐՈ - 2004Ի ՎՈՒՄԻ ԲՐՈՒՆԵՐՈՒՆ, ԵՐԷԿ ԳԻՉԵՐ ԱՐԺԱՆԱՎՈՐՆԵՐ ԱՆ ԻՆՏԵՆՏԱԿԱՆ ԱՐԴԻՆՔՆԵՐ	Սան Մարինո - Հունգարիա 0-5	Մակեդոնիա 3-2
Ե. ԽՄՔԱԿ Ֆարո կղզիներ - Գերմանիա 0-2	Լ. ԽՄՔԱԿ Էսթոնիա - Խրուսիա 0-1	Պելճիք - Աստորրա 3-0
Բ. ԽՄՔԱԿ Լուքսամպուրկ - Գանիա 0-2	Լիբիանիա - Իսպանիա 0-3	Թ. ԽՄՔԱԿ Ֆինլանդիա - Իտալիա 0-2
Նորվեգիա - Ռումանիա 1-1	2. ԽՄՔԱԿ Հիւսիսային Իրլանդա - Սլովակիա 0-0	Ալբանիա - Սերպիա 2-1
Գ. ԽՄՔԱԿ Զեխիա - Մոլտովա 5-0	Յունաստան - Ուրբանիա 1-0	Ժ. ԽՄՔԱԿ Ալբի - Վրաստան 2-0
Աւստրիա - Պիլիպիններ 5-0	Է. ԽՄՔԱԿ Անգիա - Սլովակիա 2-1	Չիլի - Իսպանիա 3-2
Դ. ԽՄՔԱԿ Շուէտ - Լեհաստան 3-0		

Հ. Բ. Ը. Մ. - ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀՍՏԱՏՈՒԹԻՒՆ

2003-2004 ՏԱՐԵՇՐԱՆ

Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը 75 տարուան պատմութիւն ունեցող երկրորդական, երկրորդ, գիշերօթիկ եւ ցերեկեայ վարժարան է: Հաստատութիւնը օժտուած արդի ուսումնական պահանջները գոհացնող կառոյցներով՝ տարրալուծարաններ, համակարգիչներ, գրադարան, մարպական համալիր:

Մ. Կ. Հաստատութեան ուսումնական ծրագիրը համապարփակ է.

● Հայերէն լեզու, գրականութիւն եւ պատմութիւն: Այլ նիւթերը՝ անգլերէնով:

● Հայերէն եւ անգլերէն լեզուներու անբարար մակարդակ ունեցող աշակերտներուն՝ մասնաշաղկապ ուսումնական:

● Յունարէն լեզուի համար կ'որդեգրուի երկու ծրագիր.

- Նախարարութեան ծրագիրը՝ որ միաժամանակ յունարէնի GCE «O» եւ «A» մակարդակի քննութիւններուն կը պատրաստէ:

- Սկսնակներու ծրագիր (Foreign Language).

● Կր դասաւանդուի աշակերտի ծննդավայրի լեզուն (օրինակ՝ արաբերէն, պուլկարերէն, ռուսերէն, ֆրանսերէն): Ինչպէս նաեւ այլ օտար լեզուի դասաւանդութիւն՝ բարար թիւով խմբակ գոյանալու պարագային:

● Աշակերտները կը պատրաստուին բարձր ճանաչում ունեցող ամերիկեան եւ երոպական համալսարաններու ընդունման պայմաններուն համապատասխանող ծրագիրով:

● Ուսումնական ծրագիրը հիմնուած է միջազգային չափանիշներու եւ մակարդակներու վրայ, անգլիական GCE «O» Levelի (սովորական մակարդակ), IGCSEի եւ «A» Levelի (յառաջացած մակարդակ): Աշակերտները կը պատրաստուին նաեւ ամերիկեան համալսարաններու մուտքի քննութեան՝ օրինակ SAT I:

● Համակարգիչի դասաւանդութիւն բոլոր դասարաններուն (համեմատութիւն՝ 10 աշակերտի 1 համակարգիչ):

● Արդիական սարքերը եւ կառոյցները (Computer lab, Physics lab, Chemistry lab, Biology lab, General Science lab) ինչպէս նաեւ մատենադարանը, ճիշտ հաւաքածոյով եւ զոյգ մարպաշար ուսումնական եւ ընկերային պարգանման եւ ընկերային պարգանման յատուկ հնարաւորութիւնները կը ստեղծեն:

● Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը ունի անձնակազմի մնալուն անդամ՝ հոգեբան - խորհրդատու (Counsellor), որ միաժամանակ կը համադրէ բարձրագոյն կրթութեան դիմումները (Career Guidance):

● Դաստիարակներու խմբակը Social Educationի ծրագիրը կ'որդեգրէ եւ հոգատարութեամբ կը հետեւի աշակերտներուն ուսումնական, ընկերային եւ նկարագրի պարգանման:

● Արտադասարանային ծրագրուած գործունէութիւններէն են՝ նկարչութիւնը, պարարտեստը, երգչախումբը, փողերախումբը, լրագիրը, քանդակագործութիւնը, թատերականը, սկաւտական եւ մարպական շարժումները: Duke of Edinburgh International Awardի անդամակցութեամբ, Մ. Կ. Հ. Ն. եպակի հնարաւորութիւն կը ստեղծէ արտադասարանային ծրագրի միջազգային ճանաչման, որուն շնորհիւ՝ մասնակցող աշակերտը կը ստանայ պրոնկ, արժան կամ ոսկի մրցանակ:

● Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը ճանչցուած կեդրոն է Oxford եւ Cambridge համալսարաններու միջազգային քննութիւններու (Center for Edexcel Exams and Affiliate Center for Cambridge University):

● Հաստատութեան վկայականը ստացող շրջանաւարտները հնարաւորութիւնը կ'ունենան իրենց բարձրագոյն ուսումը շարունակելու լաւագոյն համալսարաններու մէջ (Կիպրոս, Ամերիկա, Եւրոպա, Հայաստան, Լիբանան, եւ այլն):

Յատկապէս տեղեկութիւններ ստանալու, ինչպէս նաեւ արձանագրութեան համար կրնաք դիմել՝

Հ.Բ.Ը.Մ. - Մելգոնեան Կրթական Հաստատութիւն
Դիւան (Տիկին Իսկուրի Կեվիլեանի ու շարքութեան)
Հեռաձայն: + 375-22-422195/422204
Fax: + 357-22-493155
Հասցէ: P. O. Box 21907, CY - 1514
Nicosia, Cyprus
E-Mail: agbumei@melkonian.ac.cy
www.melkonian.ac.cy
Եւ կամ դիմել Հ.Բ.Ը.Մ.ի գրասենեակ Հ.Բ.Ը.Մ.ի «Տեմիլիսեան» կեդրոն, Անթիլիաս
Հեռաձայն՝ 04 - 522842 - 3

